



Աննա ՓԱԽԼՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

2006 թ. ավարտել է ԵՊՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն» մասնագիտությամբ, իսկ 2010 թ.՝ ՀՊՏՀ ասպիրանտուրան՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ՝ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն և ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասիստենտ է, «Ամբերդ» հեռագրության կենտրոնի հրավիրյալ փորձագետ: Հեղինակ է 40 գիտական աշխատանքների:

ԵՐԲ ՕԴՈՒՄ ՍԱՎԱՌՆՈՒՄ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԸ, ԻՆՔՆԱԹԻՈՒՆԵՐԸ ՄՆՈՒՄ ԵՆ ԿԱՅԱՆՎԱԾ...

ԱՎԻԱՑԻԱՅԻ ՃԳՆԱԺԱՄԸ

Հիմնաբառեր. COVID-19 համավարակ, օդային տրանսպորտ, ավիափոխադրողներ, ուղևորներ, բեռներ, չեղարկված, ֆինանսական կորուստներ

2020 թվականի սկզբից աշխարհի բնակչությունը պայքարում է COVID-19 նոր թագավարակի ահագնացող համավարակի դեմ, որը կաթվածահար է արել համաշխարհային տնտեսության բնականոն զարգացումը: Երկրների վարած կոշտ սահմանափակումների քաղաքականության, ավիափոխադրումների պահանջարկի կտրուկ անկման, կանոնավոր և չարտերային չվերթերի չեղարկման հետևանքով աշխարհի ինքնաթիռների 55%-ը հայտնվել է հարկադիր պարապուրդում՝ ճգնաժամի առաջ կանգնեցնելով ավիացիայի ոլորտը:

Հոդվածում վեր են հանվել ավիափոխադրումների համաշխարհային շուկայում արձանագրված միտումները՝ պայմանավորված համավարակի տարածմամբ, կատարվել են կանխատեսումներ հետագա զարգացումների վերաբերյալ:

COVID-19 պաշտոնական անվանումը կրող նոր թագավարակը տարածվում է կայծակնային արագությամբ՝ կաթվածահար անելով աշխարհի բնակչության բնականոն կյանքը: Համաճարակի կանխարգելման նպատակով բազմաթիվ երկրներում գործադրվում են ծայրահեղ քայլեր՝ «արգելակելով» համաշխարհային տնտեսության զարգացման ընթացքը:

«Հարկադրված կարանտինի» կամ, նույնիսկ, «հոգեվարքի» մեջ են հայտնվել համաշխարհային ՀՆԱ-ում զգալի մասնաբաժին ունեցող տնտեսության ճյուղեր: Փաստացի և դեռևս ակնկալվող կորուստները հատկապես շոշափելի են ավիացիայի ոլորտում:


2020 թվականի ընթացքում, ըստ նախորդ տարիների աճի միտումների հիման վրա կատարված կանխատես-

սումների, ամբողջ աշխարհում ծրագրվել էր մոտ 4.72 միլիարդ ուղևորի փոխադրում օդային տրանսպորտով (2019 թ. ընթացքում աշխարհում գործող ավիափոխադրողների կողմից տեղափոխել է 4.5 մլրդ ուղևոր), ինչն իրականություն դառնալու դեպքում 32%-ով պետք է գերազանցվեր 2015 թվականի, 75%-ով՝ 2010 թվականի և 121%-ով՝ 2005 թվականի ուղևորափոխադրումների ցուցանիշը¹: Միաժամանակ, 2020 թվականի համար ծրագրված համաշխարհային ուղևորաշրջանառությունից ակնկալվում էր ապահովել շուրջ 581 մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր եկամուտ²: Սակայն, 2020 թ. առաջին եռամսյակի իրադարձություններն ավիացիոն ոլորտում բոլորովին այլ զարգացումներ են «խոստանում»...



Գծապատկեր 1-ում ներկայացված են ուղևորափոխադրումների փոփոխված ծավալների պայմաններում ուղևորներից (հիմնականում՝ ավիատոմսերի վաճառքից) ակնկալվող եկամուտների կորուստները՝ ըստ ավիաընկերությունների գրանցման


տարածաշրջանների: Համավարակի հետևանքով ուղևորափոխադրումների կրճատումից և ամրագրված տոմսերի չեղարկումից ավիաընկերությունների ընդհանուր եկամտային կորուստները գնահատվում են 252 մլրդ ԱՄՆ դոլար³, ինչը ենթադրում է 2020 թ. համար ծրագրված եկամուտների 43.4% կրճատում: Սա համեմատական է համաշխարհային ուղևորաշրջանառության և դրանից ստացվող եկամուտների վերջին 15 տարիների աճի միտումների չեզոքացմանը, քանի որ կո-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

2020 թ. ուղևորներից ակնկալվող եկամուտների փոփոխությունները՝ ըստ ավիաընկերությունների գրանցման տարածաշրջանների (մլրդ ԱՄՆ դոլար)⁴

¹ Հաշվարկել է հեղինակը՝ ըստ Statista վիճակագրական և վերլուծական հարթակի տվյալների՝ <https://www.statista.com/statistics/564717/airline-industry-passenger-traffic-globally/>
² Statista: <https://www.statista.com/statistics/263042/worldwide-revenue-with-passengers-in-air-traffic/>
³ IATA Economics' Chart of the Week: COVID-19 delivers unprecedented shock, 27 March 2020: <https://www.iata.org/en/iata-repository/publications/economic-reports/covid-19-delivers-unprecedented-shock/>
⁴ Coronavirus: impact on the aviation industry worldwide, Statista study_id71610, March 30, 2020, p. 13: <https://www.statista.com/study/71610/coronavirus-impact-on-the-aviation-industry-worldwide/>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Օդանավակայանների 2020 թ. ակնկալվող եկամտային կորուստները՝ ըստ տարածաշրջանների (մլրդ ԱՄՆ դոլար)⁵


րուստների նման ծավալի դեպքում համաշխարհային ուղևորաշրջանառության եկամուտներն իջնում են 2005 թ. մակարդակին, այն է՝ 323 մլրդ ԱՄՆ դոլար: Առավել նշանակալի՝ շուրջ 88 մլրդ ԱՄՆ դոլարի կորուստներ, ակնկալվում են Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում գործող ավիաընկերություններում: Պատճառները հետևյալն են. նախ՝ այստեղ է կենտրոնացված աշխարհի բնակչության զգալի մասը, տարածաշրջանի ազդեցիկ երկրներն են Չինաստանը, Հնդկաստանը, Ճապոնիան, Ռուսաստանը և այլն, որոնք ոչ պակաս ազդեցություն ունեն ավիափոխադրումների համաշխարհային շուկայում, և վերջապես, հենց այս տարածաշրջանն է COVID-19 թագավարակի բռնկման սկզբնաղբյուրը: Հաջորդիվ Եվրոպան է՝ ուղևորափոխադրումներից ակնկալվող եկամուտների՝ 76 մլրդ ԱՄՆ դոլար գնահատվող կորուստներով, ապա Հյուսիսային Ամերիկան, որի հնարավոր կորուստները գնահատվում են 50 մլրդ ԱՄՆ դոլար: Մնացած տարածաշրջաններում ակնկալվող կորուստներն անհամեմատ մեղմ են:

Ավիափոխադրողներից զատ, ստեղծված իրավիճակից ֆինանսական կորուստ-

ներ են կրում նաև աշխարհի խոշոր օդանավակայանները (գծապատկեր 2), ընդ որում, կորուստների մասով «առաջնագծում» են եվրոպական օդանավակայանները՝ 15 մլրդ ԱՄՆ դոլարի չտացված եկամուտներով: Հյուսիսային Ամերիկայի օդանավակայանների կորուստները գնահատվում են 14 մլրդ, Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներինը՝ 12 մլրդ ԱՄՆ դոլար: Ընդհանուր առմամբ, թագավարակի պատճառով չեղարկված չվերթերի և ուղևորաշրջանառության ծավալների կրճատման հետևանքով՝ աշխարհի բոլոր օդանավակայանների գումարային կորուստները գնահատվում են շուրջ 46 մլրդ ԱՄՆ դոլար:

Այդ եկամուտները ներառում են օդանավակայանների ենթակառուցվածքներից, օդանավերի և ուղեբեռի սպասարկման ծառայություններից օգտվելու դիմաց ավիափոխադրողների վճարներ, օդանավակայանի տարածքում ուղևորների կողմից ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսեր, վարձակալության հանձնվող առևտրային տարածքների գովազդային վահանակների, ավտոկայանատեղերից օգտվելու դիմաց գանձվող

⁴ Coronavirus: impact on the aviation industry worldwide, Statista study_id71610, March 30, 2020, p. 32: <https://www.statista.com/study/71610/coronavirus-impact-on-the-aviation-industry-worldwide/>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Ավիաընկերությունների շաբաթական⁶ չվերթերի հաճախականության փոփոխությունը (%)՝ ըստ երկրների⁷

վճարներ և այլն:

Արդեն իսկ համաշխարհային դարձած համավարակի տարածման ահազանացող միտումների հետևանքով հազարավոր չվերթեր չեղարկվել կամ հետաձգվել են ինչպես անմիջականորեն ավիափոխադրողների կողմից, այնպես էլ մի շարք երկրներում հայտարարված արտակարգ դրության և դրանից բխող կոշտ սահմանափակումների պայմաններում: 2020 թվականի առաջին եռամսյակում աշխարհում և մի շարք առաջատար երկրներում օդային կանոնավոր ուղևորափոխադրումների չեղարկված չվերթերի և դրանց հաճախականության նվազման միտումները ներկայացված են գծապատկեր 3-ում, որտեղից պարզ է դառնում, որ համավարակի սկզբնաղբյուր և 2020 թ. սկզբի գլխավոր

էպիկենտրոն հանդիսացող Չինաստանում դեռևս հունվարի սկզբին դիտվել են ավիաչվերթերի հաճախականության ամենաբարձր միտումներն աշխարհում (շաբաթական 7.8-8.8% հավելվածի տեսքով): Սակայն, հունվարի վերջին շաբաթվանից արձանագրվել են ավիափոխադրումների հաճախականության կտրուկ անկումներ՝ փետրվարի երկրորդ կեսին հասնելով մինչ այդ երբևէ գրանցված նվազագույն ցուցանիշին, կրճատվելով 70.8%-ով: Միաժամանակ, անկում է արձանագրվել նաև այլ երկրներում՝ իրենց հետևից «ներքև քաշելով» նաև ավիափոխադրումների հաճախականության համաշխարհային միտումները: Այդուհանդերձ, ցուցանիշների անկման խորությամբ Իտալիան, Հունկոնգը, Գերմանիան, Ֆրանսիան, Միացյալ Թա-

⁴ Գծապատկերում տվյալները ներկայացված են շաբաթական կտրվածքով. որպես ժամկետ նշված է շաբաթվա առաջին օրվա ամսաթիվը, սակայն նկատի է առնվում այդ ամսաթիվով սկսվող ամբողջ շաբաթը: Այսպես՝ դիտարկվող ժամանակահատվածի վերջին ամսաթիվ՝ «Մարտի 30, 2020» ներքո նկատի է առնվում մարտի 30-ից ապրիլի 5-ն ընդգրկող շաբաթը:

⁷ Coronavirus: impact on the aviation industry worldwide, Statista study_id71610, March 30, 2020, p. 14: <https://www.statista.com/study/71610/coronavirus-impact-on-the-aviation-industry-worldwide/>



գավորությունը, Սինգապուրն ու Իսպանիան մարտի վերջին գերազանցեցին Չինաստանին, որի ցուցանիշներն արդեն իսկ ցուցադրում են հետևողական վերականգնման միտումներ: Հատկանշական է, որ քանի դեռ աշխարհի առաջատար երկրները միմյանց հետ «մրցավազքի» մեջ են մտել ավիաչվերթերի չեղարկման ծավալներով, Չինաստանում հետևողականորեն վերականգնվում են ոլորտի կորուստները. 2020 թ. մարտի վերջին ավիաչվերթերի հաճախականությունը երկրում բարելավվել է 26.9%-ով՝ կազմելով -43.9%՝ փետրվարի -70.8%-ի փոխարեն: Իսկ սա արդեն գերազանցում է համաշխարհային միջին ցուցանիշը՝ -47.7% (2020թ. մարտի 30-ի դրությամբ): Առաջիկայում ակնկալվում են սրընթաց անկումներ ԱՄՆ-ի ավիացիոն շուկայում՝ պայմանավորված վերջինիս կողմից 2020 թ. մարտի վերջին վարակակիր բնակչության թվաքանակով աշխարհում առաջատարի դերը ստանձնելու հանգամանքով:

Աշխարհի ավելի մեծ թվով երկրների իշխանությունների կողմից սահմանվող կոշտ սահմանափակումների երկարաձգման և դրա հետևանքով ուղևորափոխադրումների պահանջարկի կտրուկ և շարունակական անկման պայմաններում ավիացիայի ոլորտին սպառնացող կորուստներն էապես կգերազանցեն նախնական սպասումների վատթարագույն սցենարները:

Ավիացիոն ոլորտում մասնագիտացած Cirium (նախկինում՝ FlightGlobal) տեղեկատվական և վերլուծական ընկերության տվյալների համաձայն՝ 2020 թվականի ապրիլի 6-ի դրությամբ պարապուրդի է մատնված աշխարհում գործող ավիապարկի շուրջ 55%-ը կամ ավելի քան 14500 ուղևորատար ինքնաթիռներ⁸: Մոտավորապես 11750-ը դեռևս շահագործվում է, այսինքն՝ վերջին յոթ օրվա ընթացքում իրականացրել է առնվազն մեկ չվերթ: Ընդ որում, «կարանտինի» կամ հարկադիր պարապուրդի մեջ հայտնված ինքնաթիռների թվով առաջատարը Եվրոպան է, որի 210 օդանավակայանում 2020 թվականի մարտի 27-ի դրությամբ կայանված էր 2800 օդանավ: Հաջորդիվ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանն է՝ 150 օդանավակայանում կայանված ավելի քան 2000 ինքնաթիռով: Հյուսիսային Ամերիկայի 130 օդանավակայաններում դեռևս կայանված է 1600 ինքնաթիռ. այդ թիվը, սակայն, առաջիկայում կաճի՝ հաշվի առնելով վերջին օրերին COVID-19 համավարակի սրընթաց տարածման միտումներն ԱՄՆ-ում: Միջին Արևելքում պարապուրդի մատնված օդանավերի թիվը տատանվում է 700-ի շրջակայքում՝ տեղակայված 30 կայանատեղում⁹:

Առաջնորդվելով ավիոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչները որպես COVID-19 համավարակի տարածման կանխարգելիչ միջոց օգտագործելու՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) խորհուրդներով և կարևորելով օդանավի անձնակազմի վարակման հավանականությունը նվազագույնի հասցրնելու անհրաժեշտությունը՝ 2020 թ. մարտի 7-ին Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիան (IATA) իրականացրել է օդային տրանսպորտով վտանգավոր բեռների տեղափոխման կանոնների որոշակի ճշգրտումներ: Փոփոխված կանոնների համաձայն՝ COVID-19 համավարակ-

⁸ CIRIUM, Tracking the in-storage fleet and utilization in a time of uncertainty /by Andrew Doyle: <https://www.cirium.com/thoughtcloud/tracking-the-in-storage-fleet-at-a-time-of-uncertainty/> (Date of access: 06.04.2020).

⁹ CIRIUM, Tracking the in-storage fleet and utilization in a time of uncertainty /by Andrew Doyle: <https://www.cirium.com/thoughtcloud/tracking-the-in-storage-fleet-at-a-time-of-uncertainty/> (Date of access: 29.03.2020).

րակի կանխարգելման նպատակով ալկոհոլային հիմքով ախտահանիչները կարող են տեղադրվել օդանավերի սանիտարական հանգույցներում, տրամադրվել օդանավի անձնակազմին՝ որպես ախտահանման միջոցառումների իրականացման անհրաժեշտ բաղադրիչ կամ թույլատրվել ուղևորների ուղեբեռներում¹⁰: Նշենք, որ մինչ այս, ալկոհոլային հիմքով ախտահանիչները, շնորհիվ դյուրավառ հատկությունների, դասակարգվել են որպես վտանգավոր բեռներ՝ ներառվելով օդանավի սրահներում կամ ուղեբեռում տեղափոխելու համար վտանգավոր և անթույլատրելի ապրանքների ցանկում:

Ավիաընկերությունները տարեկան փոխադրում են ավելի քան 52 միլիոն մետրիկական տոննա¹¹ բեռ, որը համարժեք է համաշխարհային առևտրի արժեքի ավելի քան 35%-ին և բացարձակ ծավալի՝ գրեթե 1%-ին¹²: Սա նշանակում է, որ օդային տրանսպորտով փոխադրման դեպքում բեռների ֆիզիկական ծավալի և արժեքի 1:35 հարաբերակցության պայմաններում տրանսպորտի մյուս տեսակներով փոխադրվող ավելի քան 99% ծավալով բեռներին է բաժին ընկնում դրանց արժեքի ընդամենը 65%-ը, ինչը տնտեսապես արդարացված է, քանի որ օդային տրանսպորտով բեռների տեղափոխումը «թանկարժեք հաճույք է» և նպատակահարմար՝ միայն փոքր ծավալ և մեծ արժեք ունեցող ապրանքների համար:

Սովորական պայմաններում աշխարհում օդային տրանսպորտով տարեկան փոխադրվում է 6.8 տրիլիոն, իսկ օրական՝ 18.6 միլիարդ ԱՄՆ դոլար արժողությամբ բեռ¹³:

Նախքան համաշխարհային համավարակի վտանգի ի հայտ գալը, 2020 թ. համար ամբողջ աշխարհում կանխատեսվել էր շուրջ 62.4 մլն մետրիկական տոննա ծավալով բեռների փոխադրում, ինչը բեռնափոխադրող ավիաընկերություններին կապահովեր շուրջ 101.2 մլրդ ԱՄՆ դոլարի եկամտով¹⁴: Սակայն, այստեղ էլ կորուստներն անխուսափելի են, թեև բեռնափոխադրումների նկատմամբ ավելի քիչ սահմանափակումներ են կիրառվում:

Միջազգային բեռնափոխադրումների մասով բացասական միտումներն արդեն իսկ նկատելի են հենց տարեսկզբից: Գծապատկեր 4-ում արտացոլված են տոննակիլոմետրերով արտահայտված բեռնափոխադրումների (FTK – Freight ton kilometer) ծավալների փոփոխությունները 2020 թ. հունվարին՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Հատկանշական է, որ բեռնափոխադրումների արձանագրված միտումները համեմատական են կորոնավիրուսի տարածման ուժգնությանն ու աշխարհագրությանը: Այսպես՝ 2020 թվականի հունվարին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աշխարհում արձանագրվել է բեռնափոխադրումների տոննա-կիլոմետրերի 3.3%, իսկ փետրվարին արդեն 4.4% անկում՝ հիմնականում ուղղորդված Եվրոպայի (-3.7% անկում հունվարին և -3.8%՝ փետրվարին) և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի (-5.9% և -17.7%) ցուցանիշների միտումներով: Որոշակիորեն նվազել են նաև բեռնափոխադրման սակագները: Այսպես՝ եթե Հոնկոնգից դեպի Եվրոպա օդային տրանսպորտով բեռների փոխադրման սակագինը 2019 թ. դեկտեմբերին

¹⁰ IATA, Novel Coronavirus (Covid-19): Dangerous goods (including alcohol based sanitizers) guidelines for Operators – 07 March, 2020, <https://www.iata.org/contentassets/90f8038b0eea42069554b2f4530f49ea/covid-19-dangerous-goods-guidance.pdf>

¹¹ Կշռի կամ ծավալային քաշի միավոր, որը հավասար է 1000 կիլոգրամի կամ մոտավորապես 2204,6 ֆունտի: Չափման մետրիկական համակարգն առաջին անգամ կիրառվել է 1795 թ. Ֆրանսիայում, որի համաձայն՝ գրամը սահմանվեց որպես «մետրի մեկ հարյուրերորդ մաս կողմով խորանարդ ծավալ ունեցող մաքուր ջրի բացարձակ քաշ՝ սառույցի հալման ջերմաստիճանի ներքո»:

¹² IATA Air Cargo Brochure “The Value of Air Cargo: Air Cargo Makes it Happen”, IATA <https://www.iata.org/contentassets/4d3961c878894c8a8725278607d8ad52/air-cargo-brochure.pdf>

¹³ <https://www.iata.org/en/programs/cargo/>

¹⁴ Coronavirus: impact on the aviation industry worldwide, Statista study_id71610, March 30, 2020, p. 20-21 / <https://www.statista.com/study/71610/coronavirus-impact-on-the-aviation-industry-worldwide/>


3.15 ԱՄՆ դոլար էր՝ յուրաքանչյուր կմ-ի համար, ապա 2020 թ. հունվարին դա իջավ մինչև 2.83 ԱՄՆ դոլար՝ 1 կմ-ի դիմաց, իսկ 2020 թ. փետրվարին՝ արդեն 2.52 ԱՄՆ դոլար¹⁵:

Բնականաբար, այդ միտումները դեռ շարունակական կլինեն: Ակնկալվում են բեռնաշրջանառության ծավալների նշանակալի կրճատումներ հատկապես Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում:

Անխափան օդային բեռնափոխադրումների ապահովումը չափազանց կարևոր է նույնիսկ և հատկապես համաշխարհային համավարակի պայմաններում՝ առնվազն կենսական նշանակության ապրանքների և անհրաժեշտ բժշկական սարքավորումների ու պարագաների մատակարարման տեսանկյունից: Ուղևորների պահանջարկի փոշիացումով և ուղևորափոխադրումների չեղյալ հայտարարմամբ «օդում կախված» են մնացել կենսական նշանակության օդային բեռներ, քանի որ օդային բեռնափոխադրումների (ներառյալ՝ փոստային առաքումների) զգալի մասն իրականացում

էր ուղևորատար ինքնաթիռների ազատ բեռնային տեղերի հաշվին: Նման զարգացումները ծանրագույն ֆինանսական խնդիրներ են «խոստանում» ավիափոխադրող ընկերություններին, որոնց կորուստներն իրականում չեն սահմանափակվի ծրագրված, բայց չստացված եկամուտներով, քանի որ ավիացիոն ոլորտում օդանավերը, սովորաբար, ձեռք են բերվում լիզինգով (երկարաժամկետ վարձակալությամբ)՝ դրանց շահագործումից ստացվող եկամուտների հաշվին պարտավորությունների մարման պայմանով: Իսկ սա նշանակում է, որ ստեղծված իրավիճակի երկարաձգման պարագայում մի շարք ավիաընկերություններ չեն կարողանա իրականացնել լիզինգի գծով բանկերի նկատմամբ ստանձնած պարտավորությունները՝ հայտնվելով անվճարունակության և, բացառված չէ, նաև սնանկացման եզրին:

Մնում է հայացքը հառել դեպի կապույտ երկինք ու հուսալ ավելի լավ ժամանակների «չվերթի չհետաձգման»...



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Տոննա-կմ-երով արտահայտված բեռնափոխադրումների ծավալի փոփոխությունները 2020 թ. հունվար-փետրվարին՝ 2019 թ. նույն ժամանակահատվածի համեմատ (%)¹⁶

¹⁵ Coronavirus: impact on the aviation industry worldwide, Statista study_id71610, March 30, 2020, p. 24 / <https://www.statista.com/study/71610/coronavirus-impact-on-the-aviation-industry-worldwide/>

¹⁶ Coronavirus: impact on the aviation industry worldwide, Statista study_id71610, March 30, 2020, p. 23 / <https://www.statista.com/study/71610/coronavirus-impact-on-the-aviation-industry-worldwide/>

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. CIRIUM, Tracking the in-storage fleet and utilization in a time of uncertainty /by Andrew Doyle: <https://www.cirium.com/thoughtcloud/tracking-the-in-storage-fleet-at-a-time-of-uncertainty/> (Date of access: 06.04.2020).
2. Coronavirus: impact on the aviation industry worldwide, Statista study_id71610, March 30, 2020, p. 13: <https://www.statista.com/study/71610/coronavirus-impact-on-the-aviation-industry-worldwide/>
3. IATA Air Cargo Brochure “The Value of Air Cargo: Air Cargo Makes it Happen”, IATA: <https://www.iata.org/contentassets/4d3961c-878894c8a8725278607d8ad52/air-cargo-brochure.pdf>
4. IATA Economics’ Chart of the Week: COVID-19 delivers unprecedented shock, 27 March 2020: <https://www.iata.org/en/iata-repository/publications/economic-reports/covid-19-delivers-unprecedented-shock/>
5. IATA, Novel Coronavirus (Covid-19): Dangerous goods (including alcohol based sanitizers) guidelines for Operators – 07 March 2020: <https://www.iata.org/contentassets/90f-8038b0eea42069554b2f4530f49ea/covid-19-dangerous-goods-guidance.pdf>
6. <https://www.iata.org/en/programs/cargo/>
7. <https://www.statista.com/>

Анна ПАХЛЯН

Приглашенный эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук, доцент

КОГДА В ВОЗДУХЕ ПАРИТ КОРОНАВИРУС, САМОЛЕТЫ ОСТАЮТСЯ ПРИПАРКОВАННЫМИ... АВИАЦИОННЫЙ КРИЗИС

С начала 2020 года население мира борется с растущей пандемией нового коронавируса COVID-19. Глобальная пандемия парализовала нормальное развитие мировой экономики. В силу жестких ограничений, введенных странами, резкого падения спроса на воздушные перевозки, отмены регулярных и чартерных рейсов, 55% мировых воздушных судов подвергнуто принудительному бездействию, представив авиационный сектор перед угрозой кризиса.

В статье анализируются тенденции на мировом рынке авиаперевозок в результате распространения пандемии, прогнозируются дальнейшие развития.

Ключевые слова: пандемия COVID-19, воздушный транспорт, авиаперевозчики, пассажиры, грузы, отмененные рейсы, финансовые потери

Anna PAKHLYAN

Invited expert of AMBERD Research Center, ASUE, PhD in Economics, Associate Professor

WHEN CORONAVIRUS FLOATS IN THE AIR, THE AIRCRAFTS REMAIN PARKED... AVIATION CRISIS

Since the beginning of 2020, the world's population is struggling with the growing pandemic of the new coronavirus COVID-19. The global pandemic has paralyzed the normal development of the global economy. Due to severe restrictions imposed by countries, a sharp drop in demand for air transportation, the cancellation of regular and charter flights, 55% of the world's aircraft were subjected to forced inaction, facing the aviation sector in danger of a crisis.

In the article are analyzed the trends in the global air transportation market as a result of the spread of the pandemic, and forecasted further developments.

Key words: COVID-19 pandemic, air transport, air carriers, passengers, cargo, canceled flights, financial losses.